ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԲԵՅԼԵՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

«ԱՆԻՐԱՒ ՏՆՏԵՍ» ԱՌԱԿԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՏԹԵՈՍ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՂՈՒԿԱՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՔԱՐՈՉԳՐՔՈՒՄ

ԺԴ դարի վերջին և ԺԵ դարի առաջին տասնամյակներին ապրած ամենանշանակալի աստվածաբաններից է Մատթեոս Ջուղայեցին, որի մասին բավական տեղեկություններ է հասել հենց իր մատենագիտական ժառանգության էջերում: Նրա անունը կապվում է Տաթևի դպրոցի ոսկե շրջանի հետ: Նրա գործերը լայնորեն ընդօրինակվել են միջնադարյան մեր գրիչների կողմից, ոչ միայն Հայաստանում, այլև հայաշատ գաղութներում:

Մատթեոս Ջուղայեցին հանիրավի կերպով մնաց լուսանցքային հեղինակ հայ մատենագիտության մեջ, մեր գրաքննադատության մեջ հետագայում ցավալիորեն սակավ ուշադրություն դարձրեցին նրա աշխատություններին: Այդ մասին դեռևս իր վրդովմունքն է արտահայտում նշանավոր ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը Ջուղայեցուն նվիրված իր հոդվածում[1], Գ. Զարբհանալյանը իր աշխատության մեջ[2] ընդամենը երկու տողով է անդրադառնում նշված հեղինակին: Եվ եթե Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ի III-րդ հտ.-ում Մատթեոս Ջուղայեցու՝ հրատարակված ցուցակներից նրա աշխատությունների վավերագրերը համակարգող հոդվածը, ինչպես և Խաչիկյանի վերը նշված հոդվածն էլ չլինեին, պետք է խոստովանեինք, որ Զոհրաբյանի 1878թ.-ին տպագրված երկտողյա անդրադարձից հետո շատ բան այս առնչությամբ չի փոխվել: Խաչիկյանը իր հոդվածում անգամ չի զլանում հիշատակել ոմն բանասեր Բ. Սարգսյանի, որը Մատթեոս Ջուղայեցու լեզուն անվանել է «գռեհիկ», մեկնաբանությունները՝ «ցամաք», ինչպես նաև համարել, որ վերջինս Տաթևի դպրոցից դուրս. «բազմաթիւ

[1] Լևոն Խաչիկյան, Աշխատություններ, «Մատթէոս Ջուղայեցու կեանքն ու մատենագիտութիւնը», հտ. Ա., Եր. 1995թ., էջ 247-272:

[2] Տե՛ս Գ. Զարբհանալեան, «Հայկական հին դպրութեան պատմութիւն», Վենետիկ, 1886. էջ 219-220:

ընթերցողներ ունեցած չպիտի ըլլայ»[1]: Այս տեսակետը, սակայն, ավելի շուտ անիմացության հետևանք է, քանի որ քիչ ընթերցող ունեցած հեղինակին դժվար թե այդքան շատ անդրադառնային մեր գրիչները, և, վերջապես, Գրիգոր Տաթևացին հերթական հոգևորականի չէր կարող վստահել Տաթևի դպրոցը կառավարելու ղեկը, չէ՞ որ մեզ հայտնի է, որ նա նստում է «յաթոռ տէլետութեան»[2], այն է՝ Տաթևացին վերջինիս է վստահում իր գործը շարունակելու ողջ պատասխանատվությունը:

Այսպիսով մեզ հայտնի է, որ Ջուղայեցին աշակերտել է Հովհան Որոտնեցուն և Գրիգոր Տաթևացուն՝ հետագայում դառնալով Տաթևի դպրոցի նշանավոր ուսուցչապետերից մեկը, քարոզել է առաքելական վարդապետության հիմնադրույթները՝ միաժամանակ պայքարելով թե՛ ներքին աղանդավորականության՝ ունիթորականության, թե՛ արտաքին հոգևոր վտանգների, Փոքր Ասիա դեռ նոր ներթափանցող և հզորացող մահմեդականության դեմ: Այստեղ հատկապես արժեքավոր է Մատթեոսի, իբրև վկայի, անդրադարձը ասպատակողների՝ Լանկ-Թամուրի ու Կարա-Կոյունլու ցեղերի մասին: Մ. Ջուղայեցու անդրադարձը մահմեդականների արշավանքներին՝ XIV-րդ դ.-ի գրավոր արժեքավոր վկայությունն է ասպատակողների կողմից այլադավանների, տվյալ դեպքում քրիստոնյաների նկատմամբ տարվող քաղաքականության մասին. **«Արդ ասեն դոքա, եթէ ոք զքրիստոնեայ կողոպտէ կամ սպանանէ՝ արքայութիւն նմա է»**[3]:

Հարկ է հիշատակել, որ Ջուղայեցին մեզ հայտնի է նաև իբրև գրիչ և ծաղկող: Մեզ են հասել նրա մի քանի ընդօրինակություններ, որոնցից հատկապես հիշարժան են 1397-ին թվագրվող Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» աշխատությունը[4], 1407-ին ընդօրինակված երկու Ավետարանները, որ պատվիրվել են տարբեր մարդկանց կողմից:

1411-ից հետո Մատթեոս Ջուղայեցու մասին որևէ հիշատակություն չենք տեսնում, մեզ հայտնի է նաև, որ այդ միջոցին Ջուղայեցին արդեն առաջացած տարիքում էր[5]:

Մատթեոսը սիրում է խորագրի մեջ ներառել այն հեղինակների անունները, որոնցից ինքը որոշակիորեն օգտվել է, այս հանգամանքը, իհարկե, նկատել է և Խաչիկյանը, սակայն սա շփոթություն չպիտի առաջացնի՝ բերելով հեղինակի հավաստիության կասկած: Խաչիկյանը իր հոդվածում համառոտ ներկայացնում է Մատթեոս Ջուղայեցուց մեզ

---

1 Լևոն Խաչիկյան, նշվ. աշխատ., էջ 247:
2 Լևոն Խաչիկյան, նշվ. աշխատ.՝ էջ 251:
3 Ձեռ. N 2229, էջ 118բ:
4 ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ.Ս. Խաչիկեան, Երևան, 1950, էջ 615:
5 Լևոն Խաչիկյան, նշվ. աշխատ., էջ 253:

հասած աշխատությունների ցանկը[1], այնպես որ՝ այդ խնդրին չենք անդրադառնա:

Այս աշխատությունը մեզ հանդիպում է ՄՄ. N 2519, ինչպես N 1388, N 3939 նաև N 5769 ձեռագրերում, երեք խորագրերով՝ **«Նուաստ և յետին աշակերտ Մատթէոս եռամեծաց Յովհաննու և Գրիգորի աշխատասիրեաց հաւաքումն Բանին Աւետարանին Ղուկասու և քարոզ յոլովք ի վայելումն մանկանց Հայաստանեաց»** (սա բնագրի վերնագիրն է):

Երկրորդ խորագիրը՝ **«Ի գլխոյն Ղուկասու Աւետարանչին ի մեկնութենէ Իգնատիոսի սուրբ վարդապետին Հայոց, զոր յետոյ ես Մատթէոս վարդապետ, աշակերտ տեառն Յովհաննու Որոտնեցւոյն, ժողովեալ հաւաքեցի և արարի զայս քաղուածոյ գիրքս առ ի յօգուտ ուսումնասիրաց անձանց»**, ՄՄ. N 1344, N 1345, N 1386 ձեռագրերում և այլն:

Եվ երրորդ տարբերակը՝ **«Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից և յոլով քարոզք ի մեկնութենէ Իգնատիոսի Հայոց վարդապետի, ժողովեալ աշխատասիրութեամբ Մատթէոսի աշակերտի Գրիգորի»**, հանդիպում ենք ՄՄ. ձեռ. N 1262, N 5202, N 5232 ձեռագրերում:

ՄՄ. N 2519 ընդարձակ հիշատակարանից պարզ է դառնում ոչ միայն վերջինիս գրի առնելու վայրն ու ժամանակը, ինչպես հաճախ հանդիպում ենք մեր մատենագիտության մեջ, այլ նաև հեղինակը շեշտում է, որ այն գրված չէ խիստ գիտականորեն և հասցեագրվել է հատկապես մանուկներին (*ուսանողներին՝ Հ. Բ.*)՝ ձեռնարկ դառնալու նպատակով. **«Արդ, ես՝ վերջինս սպասաւորաց բանին եւ տրուպս բանասիրաց Մաթէոս քահանայ, որ միայն անուամբ եւ ոչ արդեամբք, տխաղց մտօք եւ տարտամ լեզուաւ ձեռնարկեցի յայս գործտուութեան, ոչ աւել հոգեցեալ, այլ ճշմարտութեան հետեւեալ: Արդ, է պիտանացութիւն սորա ի քարոզս բանի եւ ի կարգս զրուցաց եւ բեմասացութիւնս. ոչ գիտնոց վասն, այլ վասն մանգանց իմոյս խորհրդակցացն: Եւ արդ, թէպէտ իմաստնոյտ յայտնի է այս ամենայն, բայց յինքն տաժանելի կրիւք յառաջնեկն, վասն որոյ աղաչեմ զթերին լնուլ եւ զաւելորդն կշռել, ընդ որ եւ հայցեմ եւ սխալանացն ներել, մանաւանդ ուղիղ մտօք ընթեռնուլ: Ընդ որ եւ հայցեմ որք պատանիք մաղթել առ մարդասէրն Աստուած, թերեւս իջցէ մասն ինչ ի սրբանուէր աղօթից ձերոց ի շարաւալի հոգիս եւ սրբեսցէ զաղտ հնութեան մեղօք մեռելոյս եւ ազա-**

[1] Լևոն Խաչիկյան, նշվ. աշխատ., էջ 253-6:

տեսցէ կատարեալ ալեացս եւ արժանացուսցէ յետին մշակացն», որից հետո նշվում է ձեռագրի գրման վայրը և ժամանակը, որ Ջուղայեցուց մեզ հասած առաջին հստակ տարեթիվն է. **«Արդ, եղեւ զրաւ Համառոտութեան բանիցս քարոզութեան ի թիւ Հայոց ՊԽ. (1391), առ ոտս արդիւնաբան ետորին Գրիգորի Մեծի, յերկիրս Երնջակոյ, ի վանգս Ապրակունեաց. որ եւ այս եւս ի նորին նշուլից շնորհացն առեալ գծագրեցի առ ի յիշատակ առ յապա եղելոց մանգանց եկեղեցեացդ Հայաստանեաց»**[1]: Այսպիսով՝ այս գործով Ջուղայեցին շարունակում է Գրիգոր Տաթևացու աշխատանքը հենց մեթոդական, մանկավարժական տեսանկյունից, այսինքն՝ ձեռնարկներ ու դավանաբանական միտքը համակարգող ծրագրեր է ներկայացնում նախ և առաջ ուսանողների համար:

Կա ևս մի հետաքրքիր դրվագ, որ ցանկանում եմ ուշադրության արժանացնել: Այդ հարցին որոշակիորեն անդրադարձել է նաև Լ. Խաչիկյանը, ու մի փոքր անհասկանալի է, թե ինչու Խաչիկյանը, երբ 1950-ին իր կազմած. «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուում, ՄՄ. N 2519 ձեռագրի հիշատակարանի ընդօրինակման տողատակում ուղղակիորեն նշում է, որ սա հեղինակի ինքնագիրն է[2], հետո 1956թ. Ջուղայեցուն վերաբերող իր հոդվածում[3] վերնագրի տարբերակների ճշտման գործում հիմք է համարում ՄՄ. N 5332 ձեռագիրը և դեռ հավելում, որ ավելի ուշ շրջանում ընդօրինակված (1697 թ.) ՄՄ. N 1345-ի ձեռագրում՝ խորագրի երկրորդ հատվածը. «Ի գլխոյն Ղուկասու Աւետարանչին, ի մեկնութեանէ Իգնատիոսի սուրբ վարդապետին Հայոց, զոր յետոյ ես՝ Մատթէոս վարդապետս, աշակերտ տեառն Յովհաննու Որոտնեցոյն ժողովեալ հաւաքեցի և արարի զայս քաղուած գիրքս առ ի յօգուտ ուսումնասիրաց անձանց» իրեն ավելի նախնական է թվում:

Ուսումնասիրությանս արդյունքում պարզ դարձավ նաև, որ Ադրիանապոլսում 1697թ. գրված վերոնշյալ հոդվածում հիշատակված ՄՄ. N 1345 ձեռագիրը, որին անդրադառնում է Խաչիկյանը, լրջագույն խմբագրության է ենթարկված, հանված են ձեռագրից ընդարձակ հատվածներ, ընդ .որում գործի նմանօրինակ աղճատումը ամենևին էլ տարերային բնույթ չի կրում, նրանում հետևողականորեն հանվել են Սուրբ Երրորդության և Հայոց Առաքելական եկեղեցուն վերաբերող հատվածները, ինչպես նաև հեղինակային այն փոքրաթիվ շեղումները,

---

1 9 ՄՄ. ձեռ. N 2519, 73ա:

2 ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ.Ս. Խաչիկեան, Երևան, 1950, էջ 591:

3 Լևոն Խաչիկյան, Աշխատություններ, հտ. Ա., «Մատթէոս Ջուղայեցու կեանքն ու մատենագիտութիւնը», էջ 253:

ուր Ջուղայեցին անդրադարձ է կատարում իր ժամանակներին, կամ իրեն թույլ է տալիս անհատական որոշ դիտարկումներ, ինչպես օրինակ. **«... և այն, որ անառակ որդոյն դիպեցաւ, առաւել բազմապատիկ ազգիս հայկազեան պատահեցաւ: Զի գնացեալ յարեցաք ի խոզեանն Թուրքաստանեաց, և զոր ինչ նոցա դիւրին անկանի, մեզ ոչ ոք տայ: Եւ վա՛յ է ինձ, զի անառակ որդին եկեալ ի միտս, և զպակասութիւնն իւր գտեալ, դարձաւ՝ մեղայ ասելով: Իսկ ի յազգի իմում ոչ ոք է, որ զմտաւ ածէ զկորուստ հոգւոց և մարմնոց մերոց և կամ թէ իմասցի, թէ այսչափ վտանգի եմք տարակուսեալ, վասն որոյ աղաչեմ ի զիմաստս ի գործ արկանել և իմանալ զտառապանս մեր և ասել ընդ անառակ որդւոյն. «Մեղա՛, յերկինս և առաջի քո»[1], զի ոչ արասցէ, ըստ անաւրէնութեան մերում, այլ հայեցեալ յանարատ Միածինն, որ վասն մեր մեռաւ, և զգինս արեանն Նորա առ Ինքն հաւաքեսցէ և քակեսցէ բազումամանուած մեղս մեր»[2]:**

Ջուղայեցու՝ եկեղեցու հոտին ուղղված վրդովմունքի խոսքերը, որ գրվել են 1391 թ.-ին, ցավալիորեն ուսանելի են և մեր օրերում. **«Իսկ որք տգետքն են, զայն ինչ լուեալ, թէ և յերեկորեայ զբանս աստուածային իցեն լուեալ, ոչ ինչ արձանանայ ի նոցին, միտս բայց աղաղակ պա՛շտաւնէից և նախանձն իբրև զբևեռս ի սիրտս նոցա հարեալ աղջամղջին սրտիւ ելանեն յեկեղեցւոյն գաղթակղեալք, և ո՛չ իմացան, թէ յինչ պետս գնացին յեկեղեցին և կամ զինչ առին, որ և այս աներևոյթաբար կորուստ հասարակաց է, և ոչ իմանան, զի թէ մի բան փարիսեցւոյն, որ ասաց. «պահեմ»[3], և ուղիղ էր կորոյս զնորին արդարութիւնն, քանի ևս առաւել, որ անիծիւք անարգեն զընկերն և նախատինս բարուրանաց դնեն, և այն, զի ոչ ելանէ, խէթն այն ի մտաց երկոցունցն, և յետ այնորիկ անզղջաբար և առանց մեղայի ձեռնարկել ի սուրբ խորհուրդն, որ բերէ զանբերելի պատուհասն յԱստուծոյ»[4]**, զարմանալիորեն հասարակական հնչողություն կարող են ունենալ նմանատիպ տողերը, այնինչ նմանատիպ սթափության կոչերը ևս մի արժանիքն են վերոնշյալ աշխատության:

Մատթեոս Ջուղայեցու Ղուկասի Աւետարանի մեկնության բնագիրը մենք կարող ենք հանդիպել Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ ձեռագրերում՝

---

1 Ղուկ. ԺԵ 18:
2 ՄՄ. N ձեռ. 2519, 48բ:
3 Ղուկ. ԺԸ 12:
4 ՄՄ. N ձեռ. 2519, 62բ:

1. N 2519, 4ա-79ա ինքնագիր (1391թ)
2. N 5232, 58ա-154ա (1403թ.)
3. N 20, 119ա-246բ (1497թ.)
4. N 2518, 3բ-87բ (ԺԵ. դ.)
5. N 3939, 138ա-228ա (ԺԵ. դ.)
6. N 1130, 196բ-261բ (ԺԵ. դ.)
7. N 1389, 196բ-261բ (ԺԷ. դ.)
8. N 1386, 3ա-59բ (ԺԷ.դ)
9. N 1262, 71բ-142ա (ԺԷ. դ.)
10. N 1345, 6ա-81բ (1697թ.)
11. N 1344, 175ա-250բ (1693թ.)
12. N 1387, 11ա-130ա (1735թ.)
13. N 1388, 2ա-129 (ԺԸ. դ.)
14. N 5502, 51ա-133բ (ԺՀ. դ.)
15. N 5332, 58ա-154ա (1357թ.)
16. N 5769, 1ե-92բ (ԺԸ. դ.)
17. N 1880, 396ա-404 մի հատուած (1786-1787թթ.):

Բոլոր ժամանակներում էլ մեր հոգևոր հայրերը ունեցել են քրիստոնեությունը հասանելի, մատչելի դարձնելու խնդիր, հաճախ գործը սկսելով դպրոցականներից: Այսինքն՝ իրենց ժամանակը ծախսել են զուտ ճանաչողական բնույթի աշխատությունների վրա: Մատթեոս Ջուղայեցու Ղուկասի Աւետարանին նվիրված քարոզգիրքը բացառություն չէ, այն արտագրվել է մի շարք գրչակենտրոններում և ծառայել իբրև դասագիրք:

Առակախոսությունը քրիստոնեական քարոզի յուրօրինակ եղանակներից է, որը, իբրև ժանր, իր բարձրակետին հասավ մեր Տեր Հիսուս Քրիստոսի քարոզխոսության մեջ:

Սովորաբար առակները հիշեցնում են փոքրիկ էտյուդ, ակնթարթային ուրվապատկեր, բոլորին ասես ծանոթ մի պատմություն, որ տեղի է ունենում հենց ներկա պահին: Այս շարքին կարելի է դասել «Կորած ոչխարի» առակը (Ղուկ. 18, 3-7), «Կորած դրամի» (15,8-10), «Աշտարակի կառուցման» (Ղուկ. 14, 28-32), «Թաքցված գանձի» (Մատթ. 13, 44-45) առակները: Պատմողական առակներն այն դասն են առակների, որ կառուցված են ինչ-որ առանձին դեպք ներկայացնելու համար՝ անցյալում տեղի ունեցած:

Հատկապես պատմողական դրամատիկ ժանրի հատկանիշներ կարելի է գտնել «Անառակ որդու» առակում (Ղուկ. 15, 11-32), «Բարի սամարացու», (Ղուկ. 10, 30-37), «Անմիտ մեծատան» (Ղուկ. 12, 16-21), «Դատավորի և այրի կնոջ» (Ղուկ. 16, 1-8), «Չար մշակների» (Մարկ. 12, 1-11) առակներում:

Քրիստոսի առակները շրջապատող իրականության հետ չափազանց ներդաշն են. անցնում է Փրկիչը իր աշակերտների հետ ցորենի դաշտով և խոսում՝ հոգևոր հացի մասին, խնջույքի սեղան է նստած և համեմատում է երկնքի արքայությունը մեծ խնջույքի հետ, հանդիպում է ձկնորսներին ու խոսում փրկության համար մարդկանց հոգիները որսալու մասին (Ղուկ. Ե. 10):

Սակայն Քրիստոսի քարոզխոսության մեջ առակները միանգամայն նոր գործառնություն են ձեռք բերում՝ ներկայացնելով իրավիճակներ, որոնք ծանոթ են անմիջական ունկնդիրներին, անիմանալի ու անհասանելի երկնային ճշմարտությունները ներկայացվում են մարդուն հասկանալի ու ընդունելի միջավայրում:

Ընդ որում՝ Քրիստոսի առակները բացառիկ են նաև նրանով, որ նրա հետևորդներից ոչ ոք այլևս չզորեց խոսել առակներով: Քրիստոսի առակները ընթերցելիս միանգամայն բնականորեն մեր առջև բացվում են իր ժամանակները. մասնագիտություններն ու զբաղմունքները, մարդկանց հարաբերություններն և բարքերը: Այստեղ մենք տեսնում ենք թե՛ խաղացող երեխաների և հարսանքավորների, թե՛ պատերազմի պատրաստվող թագավորների, թե՛ հովիվների և մշակների, թե՛ առևտրականների ու ձկնորսների, թե՛ աղքատների ու հարուստների: Սակայն պետք է նշել, որ Քրիստոսի նպատակը գեղարվեստական ստեղծագործություն կամ պատմական իրավիճակ ներկայացնելը չէր, այլ՝ հոգևոր արժեքների փոխանցումը: Ուստի առակների մեջ Հիսուսի ունկնդիրը տեսնում էր իրեն, իսկ դրանց հասցեատերերը բոլորս ենք, բոլոր ժամանակներում ու ցանկացած հարաբերությունների մեջ գտնվող մարդը:

Մեր մատենագիտության մեջ բավական ընդարձակ էջեր են նվիրվել հենց այն խնդրի պարզաբանմանը, թե ինչու Քրիստոս խոսեց առակներով, ինչպես, օրինակ, Ստեփանոս Սյունեցին է գրում. **«Որք կային առ ծովեզրն, ընդ նոսա առակաւք խաւսեր, զի դեռ եւս ոչ էին կարաւղք յայտնապէս լսել զբանն Քրիստոսի, իսկ աշակերտացն ասաց որպէս կարաւղաց»**[1], և կամ, ինչպես հետևյալ աշխատության մեջ. **«Բազմադիմի առակաւք զամենախնամ տեսութիւն աստուածային սիրոյն զոր ունի առ արարածս յայտ առնէ, զի սովորութիւն է բժշկացն առ հիւանդն զնալ: Է երբեմն, զի դեղ առնէ վիարցն և ցաւոցն, և է, զի բանս մխիթարականս խօսի և է ինչ, զի յոյս դնէ զայք աւրինակ տալով, զոր առողջացուցեալ է»**[1]:

Անմիտ կլինի դասակարգել նորկտակարանային առակներ՝ ըստ

---

[1] Ստեփանոս Սիւնեցի, Մեկնութիւն չորից Աւետարանչացն, Եր. 1994թ., էջ 76:

իրենց կարևորության, սակայն մի բան անհերքելի է, որ որոշ առակների առավել մեծ տեղ է հատկացվել հետագա մեկնիչների աշխատություններում, այսինքն՝ եկեղեցու հայրերը որոշ առակներ համարել են ասես մարմնացումը քրիստոնեական դավանանքի՝ Ավետարանական ճշմարտությունները մարդկանց հասանելի դարձնելու ոչ դյուրին ճանապարհին: Հայ Եկեղեցում Պահքի շրջանում ընթերցվող առակներն, անշուշտ, սրանց թվին են դասվում:

Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և սրանց արժանի աշակերտի՝ Մատթեոս Ջուղայեցու աշխատասիրությունները, բացի հոդվածիս սկզբում նշված մի քանի փոքր ուսումնասիրություններից, արժանիորեն լուսաբանված չեն, և մենք որոշեցինք լրացնել այդ բացը՝ ձեռնամուխ լինելով դրանց հատվածաբար հրատարակման գործին: Մասնավորապես Մատթեոս Ջուղայեցու «Ղուկասի Աւետարանի մեկնութիւնը» քարոզգիրքը, որից մի հատված էլ, որ վերաբերում է ***Անիրավ տնտեսի*** առակի մեկնությանը, ներկայացնում ենք ստորև. այն տպագրվում է առաջին անգամ:

1 ՄՄ. ձեռ. N 2519, 38 աբ:

Բնագիր

ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՃԱՌՆ[1]

«Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտէս և եղև զնմանէ ամբաստանութիւն, որպէս թէ վատնի[ցէ զինչս նորա]: Կոչեաց՝ [և ասէ] զնա. [«Զի՞նչ է այս զոր լսեմս զքէն], տուր [զհամար տնտեսութեան քոյ, զի ոչ եւս կարես լինել տնտես]»[2] (Ղուկ. ԺԶ 1-2):

Ընդ սքանչելի առակացս Տեառն զարմանալ արժան է, թէ զիա՞րդ մարդասիրութեամբ լցեալ գոյ, զբոլորն խրատէ և զմասնաւորսն ուսուցանէ, զառաքինիսն յորդորէ և զմոլորսն յուղղութիւն ածէ, որպէս հայր գթած զանկիրթ որդի ուսման ուրինակաւ վարժեցուցանէ, այսպէս և Տէր մեր արար, զի թէ զանձն Իւր ոչ խնայեաց, այլ վասն ամենեցուն մեր մատնեաց զՆա: Ապա և զամենայն ինչս տնաւրինեաց փրկութեան մերոյ հնար, վասն որոյ առակաւոր բանիւ ուսուցանէ զմեզի մեղաց զերծանել. «Այր մի էր մեծատուն» (ԺԶ 1):

Արդ, նախ տեսցուք, թէ քանի տունք են և տնտեսք, և ապա՝ թէ առ որ տնտես է բան:

Արդ, նախ «տուն» *կոչի երկինքն, այսինքն՝ իմանալի աշխարհն, ըստ այնմ.* «Իմաստութեամբ շինեաց իւր տուն» (Առակ. ԻԴ 3): *Իսկ* «տնտեսք» *ի նմա՝ դասս հրեշտակաց, ըստ այնմ.* «Պաշտօնեայք և հոգիք հարկաւորք են, որ առաքինի սպասաւորութիւն» (հմմտ. Եբր. Ա 13):

Երկրորդ՝ կոչի տուն *դրախտն եդեմական, ըստ այնմ.* «Տէր սիրեցի զվայելչութիւն տան Քո» (Սաղմ. ԻԵ 8), *իսկ* «տնտես ի նմա» (Ղուկ. ԺԶ 1)՝ *զմարդն առաջին, ըստ այնմ.* |49ա| «Եդ զմարդն ի դրախտին գործել զնա և պահպանել» (հմմտ. Ծննդ. Բ 15):

Երրորդ՝ «տուն» *կոչի աշխարհս սգալի, ըստ այնմ.* «Ոչ լուցանէ ճրագ և ածէ աւել ի տան» (Ղուկ. ԺԵ 8), *իսկ* «տնտես ի սմա» *մարդկային բնութիւնս, ըստ այնմ.* «Զամենայն ինչ հնազանդ արարեր [ի ներքո ոտից նորա], զխաշն և զարջառ և զամենայն ինչ]» (Սաղմ. Ը 7-8, հմմտ. Եփես. Ա 22):

Չորրորդ՝ տուն կոչի եկեղեցի՝ Նոր Սիոն, ըստ այնմ. «Տան քում վայել է սրբութիւն» (Սաղմ. ՂԲ 5), *իսկ տնտեսք ի սմա՝ առաքեալք և մար-*

---

[1] «Նուաստ և յետին աշակերտի Մատթէոս, եռամեծացն Յովհաննու և Գրիգորի աշխատասիրեաց, Հաւաքումն բանից յԱւետարանէն Ղուկասու և քարոզ ի վայելումն մանկանց Հայաստանեաց»: ՄՄ. ձեռ. 2519, 48բ-52ա:

[2] Բոլոր Ավետարանյան մեջբերումները արված են ըստ «Աստուածաշունչ մատեան հին և նոր Կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց...», Յովհաննու Զօհրապեան վարդապետի, Վենետիկ, 1805:

գարէք և վարդապետք և հայրապետք, ըստ այնմ. «Զորս եդ [Աստուած] յեկեղեցւոջ՝ այս են, նախ՝ զառաքեալս, [երկրորդ՝ զմարգարէս]» (Ա Կորնթ. ԺԲ 28):

Հինգերորդ՝ «տուն» *կոչի իւրաքանչիւր մարդ, ըստ այնմ.* «Ես յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեզս» (հմմտ. Եսայի ԿՁ 2): *Եւ Պաւղոս ասէ.* «Որոյ տունն մեք իսկ եմք» (Առ Եբր. Գ 6): *Իսկ տնտեսք ի սմա՝ միտքն, որպէս ասէ աստ.* «Որոյ էր տնտես. և եղև զնմանէ ամբաստանութեամբ» (Ղուկ. ԺՁ 1):

Արդ, յայսցանէ, զոր ասացաք բան զԱւուրբ Աւետարանիս, երկնայնոցն ոչ պատշաճի, զի ոչ կարեն մեղանչել ի տնտեսութեանն և պարտապան գտանել, այլ են դժուարաշարժք ի մեղս կամ ամենևին անշարժք: Իսկ Ադամայ ոչ պատշաճի, զի դեռևս յանմեղութեանն էր, և տակաւին ոչ տիրէին մեղք, մինչև խաբեցաւ յաւձէն: Իսկ բոլոր բնութեանս ոչ հետևի, զի բնութիւնն առհասարակ ոչ կարէ մեղանչել, այլ առանձին միոյմիոյ մարդոյ: Եւ եկեղեցւոյ տնտես ի պատշաճի սակաւ ինչ այնու, զի նոքա ի մարդկանէ են, իսկ այնու՝ ոչ, զի թէ ոք տնտես կարգեցաւ յեկեղեցի, ոչ ևս կարէ ելանել ի նմանէ: Ուրեմն յայտ է, թէ իւրաքանչիւր առանձին մարդոյ պատշաճի:

Արդ, առձեռն պատրաստեսցուք ո՞վ է «Այրն»: *Այր է այրացեալ Աստուածն մեր, Յիսուս, զոր և սակաւ յառաջ ասացեալսն՝* «զուարակ» *ասաց: Եւ յիրաւի, զի նա միայն է ճշմարիտ այր, զի ոչ ինչ է, զոր կարօտի նա:*

Իսկ «մեծատուն» *կոչի: Եւ սա առաւել մեծատուն, քանի որ յաշխարհի:*

Նախ՝ զի ամենայն մեծատուն մասամբ ունի մեծութիւն, իսկ Նա՝ ծայրագոյն և կատարեալ, ըստ այնմ. «Երկինք աթոռ իմ են և երկ[իր պատուանդան ոտից իմոց]» (Եսայի ԿՁ 1):

Երկրորդ՝ զի սոքա ստացմամբ ունին, իսկ Նա՝ բնութեամբ:

Երրորդ՝ զի սոքա կարօտ են օգնականի, իսկ Նա՝ անկարօտ Բնութիւն է, ըստ այնմ. «Ուր էիր մինչ ես հիմունս արկանէի երկրի» (Յոբ ԼԸ 4):

Չորրորդ՝ զի սոքա զոմանց կարուտութիւն լնուն և ոչ իսկապէս, իսկ նա՝ զամենեցուն և կատարելապես, ըստ այնմ. «Եկայք առ իս ամենայն աշխ[ատեալք] և ես հ[անգուցից զձեզ]» (հմմտ. Մատթ. ԺԱ 28):

Հինգերորդ՝ զի ի սոցա տ[ալն պա]կասին մեծութիւնք սոցին, իսկ Նորայն անպակաս մնայ:

Վեցերերդ՝ զի [սոքա] |49բ| *ոչ կարեն ստեղծանել և տալ, իսկ Նա՝ Ստեղծաղ և Արարիչ, ըստ այնմ.* «Ամենայն ինչ նովաւ եղև» (Յովհ. Ա 3):

Եթներորդ՝ զի սոքա թէպէտ մեծատունք, սակայն դեռևս կարօտին առնուլ, իսկ Նա՝ ոչ փափագի իրաց:

Ութերորդ՝ զի սոքա չարչարանօք են ստացեալ, իսկ Նա՝ ոչ ունի աշխատանք:

Իններորդ՝ զի սոցա ինչքն կորստական է, իսկ Նորայն՝ անկորուստ, ըստ այնմ. «Զուրախութիւնն ձեր ոչ ոք հանէ ի ձէնջ» (Յովհ. ԺԶ 22):

Տասներորդ՝ զի սոքա մարդ սոսկ ի մեծութեան, իսկ Նա՝ Աստուած մարդացեալ, յաղագս որոյ ասէ. «Այր մի էր մեծատուն» (ԺԶ 1):

Իսկ յատկութիւն տնտեսի բազում ինչ է:

Նախ՝ զի տնտեսն ոչ ունի իւր ինչ, այլ ի տէրունեացն հաւատացաւ նմա:

Երկրորդ՝ յատուկ է տնտեսին ըստ կամաց տեառն գնալ և պատրաստել զամենայն, որպէս և կամեսցի:

Երրորդ՝ ժիր լինել ի գործն, յոր հրաւիրեալ է և ոչ երբեք ծուլանալ:

Չորրորդ՝ զկերակուրն պատրաստել ի ժամու:

Հինգերորդ՝ տալ յամենայն ժամու ծառայակցացն առատապէս:

Իսկ ելանելն ի տնտեսութենէն լինի վասն բազում պատճառի:

Նախ՝ զի ժիր ոչ լինի գործն:

Երկրորդ՝ թէ վատ շինէ զկերակուրն:

Երրորդ՝ թէ գող լինի:

Չորրորդ՝ թէ ընդ վայր մսխէ:

Հինգերորդ՝ թէ լիրբ լինի լեզուաւ և դիմաւք:

Վեցերորդ՝ թէ պեղծ լինի գործով:

Եւթներորդ՝ թէ ծնհնազանդ լինի բարուք:

Ութերորդ՝ թէ հիւանդ լինի մարմնով:

Իններորդ՝ թէ անհամբեր լինի:

Տասներորդ՝ թէ պինտ լինի ոիշտ: Այսոքիկ պատճառք են ելանելոյ:

Արդ, այսպէս, որ ասացաք մարդկային բնութեանս ոչ ինչ է, այլ յԱստուծոյ տուեալ է պարգևքն ամենայն, զոր ինչ տեսանես ի վերայ երկրի, ըստ այնմ. «Զի՞նչ է, զոր ոչ առեր և զի՞արդ պարծիս առեալդ, իբր զչառեալ» (հմմտ. Ա Կոր. Դ 7), *թէ քահանայութիւն է և թէ վարդապետութիւն, թէ այլն ամենայն: Եւ զայսոսիկ սակս այնր տայ, զի փոքուաւս զմեծ և զանճառելին ստասցուք, ըստ այնմ.* «Ի փոքուն հավատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ» (Մատթ. ԻԵ 23), *և թէ.* «Որ ի փոքուն հաւատարիմ է և ի բազում հաւատարիմ է» (հմմտ. Ղուկ. ԺԶ 10):

Արդ, ամենայն քահանայ և ամենայն ոք, որ շնորհ ընկալեալ է յԱստուծոյ, տնտես է այնմ գործոյ և շնորհի, յաղագս որոյ պարտի ըստ յառաջ ասացեալ յատկութեանցն տնտեսին գնալ: Իսկ եթէ զմի ի պատճառաց ելանելոյն գործէ, ըստ վերոյ ասացելոցս, ելանէ յայնմ բարեաց տնտեսութենէ:

Եւ յայտ է, թէ այլ իրաց հանդիպի, յորժամ յայնմանէ զրկիցի, քանզի հակառակ են այնմ գործոյ տասնեքին սոքա, որպէս ասացաւ ի կարգէ բանիցդ. զի եթէ ի մարմնաւորս, որք զայսն գործեն, եղկելիք են: Յայտ ուրեմն է, թէ առ Աստուած և առաւել պարտի զգուշութեամբ: Իսկ եթէ ոք

ոչ կարէ տանել այսմ և սխալել ի գործն զինչ և իցէ առնէ, քանզի յուսահատութիւն ուսուցանէ առ|50ա|ակաւս մինչ ի յելս շնչոյն խնդրել զԱստուած և բարէգործել: Այլև զայս յառաջագոյն ուսոյց, այսինքն՝ զկամս քաղցրութեան հաւն առ անառակ որդին, զի ընդունի յամենայն ժամ, միայն զդարձն խնդրէ առ ինքն: Զի թէ ոչ ընդունի ի մահուան ժամանակի ծերութեանն, զի՞արդ յերկարէ զժամանակ մեղաւորին, զի ասէ. «Ոչ կամիմ զմահ մեղաւորին» (հմմտ. Եզեկ. ԺԸ 32), *քանզի որքան կայ ի ծերութիւնն մերձի և ի մահուան ամբաստանութիւն, այսինքն՝ վատնելոյ զինչս նորա:*

Արդ, զի՞արդ լինի այս, զի Աստուած ծածկագետ է, զանգործսն գիտէ, զիա՞րդ գործելեացն անգէտ մնալով կարօտի ամբաստանութիւն: Արդ, թէպէտ նա ամենագետ է, և ոչ է կարիս ամբաստան լինելոյ, սակայն երկայնամիտ է, նեղ է ժամանակ ինչ յանցաւորաց: Իսկ մարդիկ կարճամիտ գոլով, և զոմանք ի չարութեանն տեսեալ ի յափշտակութեան և ի նեղել զտնանկս և յայլ ամենայն գործս զազրալիս ծանձրացեալք յայսպիսեացս, զձեռն յերկինս համբարձեալ, բողոքեն առ Աստուած, ըստ այնմ. «Զրկեալն ի ձէնջ աղաղակէ, և բողոք հնձողաց եհաս յականջս Տեառն զօրութեանց» (Յակ. Ե 4): *Նաև հրեշտակք, որք կարգեալ են պահապան մարդկան, նոքա ամենևին մաքուր, և տեսանեն զգործս ամբարշտաց և ծանձրացեալ ամբաստան լինին նոքա առ Աստուած, զի մի միշտ երկայնամիտ լիցի, այլև վրէժխնդիր, ըստ այնմ.* «Յայտնելոց է բարկութիւն Աստուծոյ ի վերայ ամբարշտութեան մարդկան» (հմմտ. Հռոմ. Ա 18), *և թէ* «Բարկութիւն Տեառն իբրև զջուր ձորալից պարանոցաթաղ յորդեսցէ» (հմմտ. Եսայի Լ 27-28):

Արդ, գիտասցուք եղբարք, զի բազում ժամանակս երկայնամիտ լինի մեզ Տէր, մի՞թէ դարձուք ի մեղաց, որպէս և ասացաք յԱւետարանէ աստի: Իսկ ի բազմանալ մեղաց մերոց լինի ամբաստանութիւն, և շարժեն զԱստուած ի վրեժխնդրութիւն, վասն որոյ կոչեաց զնա և ասէ. «Զի՞նչ է, որ լսեմս զքէն, տուր ինձ զհամար տնտեսութեան, զի ոչ ևս կարես[ս լինի]լ տնտես» (հմմտ. Ղուկ. ԺՁ 2): *Մարդկաբար խօսի, իբր թէ ոչ գիտէ և դեռ յերկբայս է: Եւ արդ՝ վասն այն արար, զի մեզ ուսուցանէ, թէ մի առանց քննութեան ոչ դատել, զի թէ նա, որ ամենեցուն գիտողն է, առանց քննութեան ո՛չ դատէ, և մեք անզգամեալ միայն սուտ համբաւիւն զեղբայրն մեր ջանամք խեղդել:*

Արդ, կոչելն զհիւանդութիւնն ասէ, որ կոչէ ի դուռն մահուն: Իսկ ասելն. «Ո՛չ ևս կարես լինել տնտես» (Ղուկ. ԺՁ 2), *յիրաւի, ամենայն, |50բ| որ չարանայ, և այն բարեգործիւք, ոչ միաբանի ընդ բարւոյն, ըստ այնմ.* «Զի՞նչ միաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի» (հմմտ. Բ Կոր. Զ 14):

Իսկ արդ, զի իմաստուն արար Աստուած զմարդն, յորժամ տեսանէ զայս, խորհի միտքն իմաստութեամբ իւրով, ըստ անառակին. «Իմաստ-

նութիւն յելս ծանապարհաց գովի» (Առակ. Ա 20): *Խորհեցաւ և ասէ.* «Զի՞նչ արարից, զի տէր իմ հանէ ի տնտ[եսութենէ]» (հմմտ. Ղուկ. ԺԶ 3), *այսինքն՝ լուծանէ ի կենաց աստի.* «Գործել ոչ կարեմ» (ԺԶ 3), *զի չիք ինչ ժամանակ ապաշխարութեան, զի քերեցից զաղտ ի հոգւոյս և փոխանակ չարեացն բարի արարից, և ի հանդերձեալն յանփոփոխ կեանս ժամանել:* «Մուրանալ ամաւթ է» (հմմտ. ԺԶ 3), *զի այն չէ տեղի մուրանալոյ, և թէ մուրանամ ևս, ո՛չ ոք տայ ինձ, զի ոչ է անտ ողորմութիւն: Զոր օրինակ յիմար կուսանք, վասն որոյ հնար իմանայ և ասէ.* «Գիտեմ զի՞նչ արարից» (ԺԶ 4): *Եւ կոչեաց զմի ի պարտ[ապանացն].* «Դու քանի՞ ինչ պարտիս», «Ճ. (100) մար ձիթոյ», *ասէ.* «Կա զգիր քո նստի գրեա՛ Ծ. (50), և երկրորդ՝ Ճ. (100) քոռ ցորենոյ: «Կա զգիր քո, և ն[իստ և գրեայ] Ղ. (80)» (հմմտ. ԺԶ 6-7):

Եւ այս յիրաւի, զի դիւրաւ մեղանչէ հոգին և փոքր հեշտանայ ի մեղքն, վասն որոյ ըստ արդար դատաստանին զկէսն եթող: Իսկ զմարմնոյն զհնգէն մինն, վասն զի նա ունէր ի ձեռն ո՛չ առնել զմեղս և արար, զի դիւրին է, թէ կամի ոչ զշնութիւնն գործել և ոչ զայլն:

Եւ զի՞ կամաւորութեամբ գործեաց զմարմնաւորք: Յիրաւի զմինն թողու ի զղջումն, իսկ զայլսն՝ խոստովանութեամբ և ողորմութեամբ, և տրաւք տնանկաց:

Դարձեալ՝ զոր յետ աւազանին գործեցաք, պարտապան եղաք նմին, զկէսն թողու, իսկ եթէ լրբութեամբ ի մարմին Տեառն մերձեցաք, այն դժուարին է հնգէն մինն, ըստ որում. «Որ ուտէ զմարմին Տեառն անարժանութեամբ, դատաստան անձին իւրում ուտէ և ըմբէ, զի ոչ խտրեաց զմարմին Տեառն» (հմմտ. Ա Կոր. ԺԱ 29):

Իսկ Ճ. (100) ասաց, որ զկատարեալն նշանակէ, զոր օրինակ առաքինութիւնն ի Ճ. աւորն պատշաճեցան, նոյնպէս և մեղքն կատարեալ թուով ասէ:

Իսկ զի՞ զհոգւոյն մեղքն ի ձէթ առակէ: Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի ձէթն լուսոյ նիւթ է, այսպէս և բանբասանքն և սուտն հոգւոյն մեղքն են:

Երկրորդ՝ զի անաւսր իմն է ձէթն, այսպէս և հոգւոյն մեղքն ոչ նիւթաւոր, որպէս մարմնոյ:

Երրորդ՝ զի դիւրաւ տարածանի ձէթն ի վերայ հանդերձին, այսպէս և հոգւոյն մեղքն փութանակի լինի:

Չորրորդ՝ զի ոչ իջանէ ձէթ յատակ ջրոյ, այլ յերեսն ելանէ, այսպէս և նախանձ և ամբարտաւանութիւն ոչ մտանէ ի մարմին, այլ ի հոգին:

Հինգերորդ՝ զի դժուարաւ ելանէ ձէթ ի նիւթոյ, այսպէս և հոգւոյն դժուար է լինել առանց մեղաց:

Վեցերերդ՝ զի կրկին զհակառակսն յինքն յինքն ընդունի զջեր

|51ա|մութիւն և զցրտութիւն, այսպէս և հոգին միշտ զոչայ և միշտ մեղանչէ:

Եւթներորդ՝ զի ի վայթելն ոչ ածէ զձայն, այսպէս և մեղքն ի հոգին ոչ երևի մարդկան:

Ութերորդ՝ զի թափանց զօրութիւն ունի ձէթն, այսպէս և մեղքն թափանցանէ ի մարմինն և ի հոգին հասանէ:

Իններորդ՝ զի ինքն ըստ ինքեան ոչ լինի ձէթն, այլ ի նիւթոյ իմեիքէ, այսպէս և հոգին ոչ ունի բնութեամբ մեղք, այլ՝ ի պատճառէ իմիքէ լինի:

Տասներորդ՝ զի հնարին մարդիկք հանել զձէթն ի հանդերձէն, այսպէս և զոյ հնար և զհոգին սրբել ի մեղաց, որպէս ասէ Տէրն. «Կա զգիր քո և նիստ գրեա Ծ. (50)» (հմմտ. Ղուկ. ԺԶ 6):

Իսկ զմարմնոյն մեղք ի «ցորեն» առակեաց (տե՛ս ԺԶ 7), և այս ևս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի ցորեանն ոչ է մի թուով, այլ անթիւ, այսպէս և մարմնոյն մեղք ո՛չ են մի, այլ՝ բազում:

Երկրորդ՝ զի ծանր է ցորեանն, այսպէս և մեղք մարմնոյն ծանր են, քան զհոգւոյն:

Երրորդ՝ զի ի յաշխարհի ոմանք վաստակին ցորեանն, այսպէս և ոմանք գործեն մեղս մարմնով և ամենեքեան:

Չորրորդ՝ զի առանց ծամելոյ ոչ ոք առնու զհամ ցորենոյն, այսպէս և առանց մերձաւորութեամբ ի մեղս մարմնաւոր, ո՛չ ոք գիտէ զնա:

Հինգերորդ՝ զի մի հատ ցորեանն բազում ծուխղք բերէ, այսպէս և մի մեղք մարմնոյն սովորեալ բազում ստանայ գործել:

Վեցերերդ՝ զի դժուարին է ի հացէ կտրիլ և ոչ ուտել, այսպէս և թէ ոք սովորեցաւ ի շնութիւն, ոչ կարէ զերծանել ի նմանէ, եթէ ոչ օգնականութեամբ Աստուծոյ:

Եւթներորդ՝ զի քաղցրութիւն տայ սակաւ մի և կորնչի յորկորն, այսպէս և մեղք մարմնոյն սակաւ մի հեշտացուցանէ և այլ ոչ ևս:

Ութերորդ՝ զի հաստատ է զսիրտ մարդոյն, այսպէս և մեղք մարմնոյն կապէ զմարդն և ոչ տայ թոյլ զոչալ կամ ապաշխարել:

Իններորդ՝ զի առատ է ցորեանն, և ամենայն մարդ գտանէ, այսպէս և մեղք մարդոյն՝ առձեռն պատրաստ է ամենեցուն գործողաց իւրոց:

Տասներորդ՝ զի թէ ի ջուր անկեալ ցորեանն՝ փտի և կորնչի, այսպէս և մեղք մարմնոյն արտասուօք դիւրաւ կորուսանի, որպէս ասէ. «Կալ զգիր քո և նիստ գրեայ Զ. (80)» (հմմտ. ԺԶ 7):

Իսկ արդ գիտեա՛, ով է եղբայր, զի որպէս ասացաւ, ամենայն մեղաց կէսն թողութիւն, և մարմնոյ և արեան պարտուցն հնգէն մին: Մի յուսահատեսցիս, այլ ուղղեա՛ զքեզ ո՛չ լինել պարտապան նմա, զի դիւրին է ոչ լինել պարտապան, այս է, փոքր ժամանակաւ խոստովանութեամբն յայս ամենայն ահէ և երկիւղէ: Իսկ թէ սխալիս և ի նոյն մի յամեսցիս,

այլև զայն փութով խոստովանեայ: Զի թէ ի հնումն, որք զաւրէնսն անցանէին Մովսիսի քարամբք սատակել հրամայէր, քանի ևս առաւել, որ զորդին Աստուծոյ առ ոտն է հար և զարիւն Նորոյ Ուխտի |51բ| խառնակ համարեցաւ:

Ուրեմն յայտ է, թէ որ չափ վնաս է անարժանութեամբ ուտել և ըմբել, բայց զի մի յուսահատութեան ալիս զմեզ ընկղմեսցէ, ուսուցանէ քաղցրութեամբ այսու բանիւք, որ ասացաւ ի յելս շնչոյն, թէպէտ անբաւ լինի պարտիքն, և է ժամանակդ ապաշխարութեան, վասն որոյ գովեաց Տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար:

Արդ, աղաչեմ սիրելիք, մի՛ վերջասցուք ի ելք կենաց մերոց խնդրել զնա, թէպէտ և կարի ծանր է բեռն մեր, և բարձրացեալ է, քան զերկինս, զի թողութեանց պարգևողն Ինքն է: Զի թէպէտ ոչ ունի յայնմ ժամու ընդ սուրբսն դասել, սակայն յայնմանէ ազատեցաւ, որ ընդ մէջն կտրի և ընդ անհաւատսն դատի: Եւ զոր կապեալ ոտիւք և ձեռաւք, հանին ի խաւարն արտաքին ի լալ աչացն և ի կրճել ատամանցն: Եւ այս մեծ ողորմութիւնն է մեզ, թէ յայսպիսեացս զերծանիցեմք: Զայս եթէ ոք ընդդէմ բերիցէ ո՛չ հաւատալ նախ ինքն գիտէ, որ զայս առակս ասաց, զի ոչ թէ սուտ ասաց Նա, որ Ճշմարտութիւնն է, քաւ լիցի, այլ՝ զի ճշմարիտ է բանք նորա, վասն որոյ ունի կարդղութիւն այսպիսեաւքս տալ զքաւութիւն: Իսկ եթէ ոք անհաւատ եղեալ բանիցս հակառակիցի, մեք ոչ ունիմք զայն սովորութիւն և ոչ եկեղեցիքն Աստուծոյ, յաղագս որոյ գովէ զտնտեսն անիրաւութեան. «զի իմաստութեամբ արար» (Ղուկ. ԺԶ 8): Զնոյնս «Իմաստութիւն յելս» գովէ Սողոմոն (տես Առակ. Ա 20), և թէ. «Յորս գտայց ի նոյն դատեցայց» (Յովհ, Ե 30):

Իսկ արդ՝ իմաստնագոյն ասէ զմարդիկք, քան «զորդիս լուսոյ», այսինքն՝ քան զիրեշտակս: Եւ այս ըստ բազում եղանակի:

Նախ՝ զի մարդկան ազգ դարձ ունի ի մեղաց, իսկ հրեշտակք՝ ո՛չ ունին, զոր օրինակ՝ դևք:

Երկրորդ՝ մարդիկք կարեն ապաշխարութեամբ ապրել, իսկ հրեշտակաց՝ ոչ գոյ հնար ապաշխարութեան:

Երրորդ՝ զի առնուն թողութիւն մեղաց, իսկ հրեշտակաց՝ ո՛չ գոյ հնար թողութիւն մեղաց:

Չորրորդ՝ զի մարդիկ կարեն զինքեանս նուաճեցուցանել ընդ հրամանօք նորագունիւք, իսկ նոքա՝ բնականապէս վարին և ոչ ունին փոփոխումն:

Հինգերորդ՝ զի յորժամ ի մեղք ինչ արկանիմք, ի յետ մեղացն ողբամք զանցեալն, իսկ նոքա, թէ ի չար անկեալ և չարանան ևս, որպէս սատանայ և իւրքն:

Վեցերորդ՝ զի մեք առաւելացուցանեմք զառաքինութիւն, իսկ նոքա ոչ կարեն, զի ոչ ունին մարմնական գործիք:

Եւթներորդ՝ զի մեք գնեմք արեամբ մերով զարքայութիւնն, իսկ նոքա՝ ոչ կարեն հեղուլ զարիւն և գնել, քանզի ո՛չ ունին մահ և ո՛չ արիւն:

Ութերորդ՝ զի մեզ կարողութիւն գոյ ի հրեշտակաց դասն մերձաւոր լինել, և ևս գերի վերոյ, իսկ հրեշտակք՝ միոյ ծգնաւորի պսակի ոչ կարեն հասանել:

Իններորդ՝ զի մեք ծառինն Աստուծոյ եմք ստեղծուած, իսկ հրեշտակք՝ բանիւ միայն, որպէս և անասունք:

Տասներորդ՝ զի Աստուած ի մեր բն|52ա|ութիւնէս էառ մարմին և ոչ ի հրեշտակաց, վասն որոյ ասէ Տէրն վասն ինքեան՝ «իմաստնագոյն», *այսինքն՝ գերագոյն և բարձրագոյն է, քան զնոսա, վասն զի Աստուած է բնութեամբ, իսկ հրեշտակք՝ սպասաւորք են նմայ:*

Իսկ զհրեշտակ «որդիս լուսոյ» *կոչէ: Եւ այս վասն բազում պատճառի:*

Նախ՝ զի լուսոյ արարան հրեշտակք, վասն որոյ որդիք նմին կոչին, ըստ այնմ. «Ասաց Աստուած. «Եղիցի լոյս»» (Ծննդ. Ա 3), *և թէ.* «Ո՞ր արար զհրեշտակս իւր յոգիս և զպաշտօնեայս իւր ի հուր» (Եբր. Ա 7):

Երկրորդ՝ զի պարզ է լուսոյ բնութիւնն, այսպէս և հրեշտակաց:

Երրորդ՝ զի անաղտ է լոյսն, այսպէս և հրեշտակք, որք մնացին յանկմանէն, ո՛չ կարեն մեղանչել:

Չորրորդ՝ զի անորակ է լոյսն, այսպէս և՝ հրեշտակք:

Հինգերորդ՝ զի անձև է, այսպէս և՝ զբարութունքն:

Վեցերորդ՝ զի չէ մարմին լոյսն, այսպէս և՝ հրեշտակք:

Եւթներորդ՝ զի թափանցէ լոյսն ընդ ջուր և յապակի, այսպէս և հրեշտակք՝ ո՛չ ինչ արգելք ունին:

Ութերորդ՝ զի բարձր է տեղեաւ լոյսն, այսպէս և կայանք հրեշտակաց գեր ի վերոյ է յիմանալի Տեառն:

Իններորդ՝ զի ունի շարժումն լոյսն, այսպէս և հրեշտակք, որք առաքինի սպասաւորութիւն, ըստ առաքելոյ (տե՛ս Եբր. Ա 14):

Տասներորդ՝ զի լոյսն ոչ շեղի ի բնութենէ իւրմէ, այսպէս և հրեշտակք՝ ոչ ապականին: Դարձեալ, զի լոյսն յումեքէ ոչ ըմբռնի[1]*, բայց ինքն զայս ջերմացուցանէ, այսպէս և զհրեշտակք ոչ ոք կարէ ըմբռնել, բայց նա պատուհասէ զոք հրամանաւ Աստուծոյ:*

Արդ, այսոքիկ գովութիւն, զոր կարգեաց Տէրն, յորդորէ զմեզ միշտ պատրաստ ի կալ: Եւ մանաւանդ, զի աւրինակաւս պարզ է զմիտք բանին, զի ասէ. «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան, զի յորժամ պսակեսցի այս կեանքս ընկալցի զձեզ ի յակսն յաւիտենականս]» (հմմտ. Ղուկ. ԺԶ 9):

---

[1] «շեղի ի բնութենէ իւրմէ, այսպէս և հրեշտակք՝ ոչ ապականին: Դարձեալ, զի լոյսն յումեքէ ոչ ըմբռնի» հատվածը բացակայում է N 1345 ձեռագրում:

Ուստի յայտ է, զի զանտի կեանքն ոչ իւիք իրաւք է գտանել, բայց միայն ողորմութեամբ, զի զայս ինչ, զոր անիրաւութեամբ գծեմք, զնոյն դարձեալ առցուք ի բարեգործութիւն, զի զստոյգ զմեղքն մեր ջնջէ ողորմութիւնն, ըստ այնմ. «Զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես և զանօրէնութիւնս քո՝ տրօք տնանկաց» (հմմտ. Դան. Դ 24): *Վասն որոյ, զոր օրինակ զպահս ի յանձին ունիմք, ընդ նմին և զաղաւթս, ըստ սոցա կարաւտի ողորմութիւնն, զի կատարեալ լիցուք ի յառաքինութիւն[ն]: Եւ այս փոխէ մեզ, զոր օրինակ առնեմք և նմին իրի հանդիպիմք, վասն որոյ մի՛ հեղգասցուք առնել զողորմութիւն, զի ողորմութեանն Աստուծոյ արժանաւոր լիցուք ի <ի> Քրիստոս Յիսուս, Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. [ամէն]:*